# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

## ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐՔԵՐԸ

ՋԷՆՔԵՐԸ ՎԱ՛Ր. — «Հայրենիք» լրագրի խմբագրապետութիւնը՝ յղած է մեզ իրեն հրատարակած «Զէնքերը վա՛ր» երկհատոր վիպասանութիւնը։ Հեղինակուհին է Բերթա ֆօն Զուտնէր, իսկ թարգմանիչն է Պր. Մ. Համբարձումեան. սա ինքնակենսագրութիւն է Մարթա Ֆօն Տիլինկի։

Խաղաղութեան սէրը և փափուկ մարդասիրութեան զգացումը ներշնչած է հեղինակուհի Berta V. Suttnerին, պատմական և իրական կեանքի դէպքերը սիրուն ոճով մը շաղկապելով վէպ մը ձևացնել, և այդ ոճով համոզել հասարակութիւնը՝ թէ պատերազմէ աւելի հակամարդկային արարք կարելի չէ երևակայել. թէ համաշխարհային խաղաղութիւնն և երջանկութիւնը՝ միայն «Զէնքերը վա՛ր» առնելով կարելի է ձեռք բերել, և այլն։

Գրքին 650է աւելի էջերն այնքան չքնաղ շարահիւսութիւն մը ունին՝ որ ընթերցողը կը գրաւուի և առանց յոգնութիւն զգալու ընթերցումը կը շարունակէ՝ թէև տեղ տեղ ճաշակին, ըմբռնողութեան և համոզումին հակառակ տեսարաններու հանդիպի, և տպագրական ու թարգմանչական ինչ ինչ պակասութիւններուն աչք գոցէ, խոստովանելու համար թէ երկհատոր հրատարակութիւնը կ'արժէ կարդալ. գինն է 1 տոլար. դիմել՝

Imprimerie « Haïrenik »

7 Bennet St. BOSTON, MASS.

ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԱՐԵՑՈՅՑ. – Բարիզու Ներսիսեան տպարանը հրատարակած է այս բազմօգուտ, գեղեցիկ և չքնաղ տարեցոյցը, որ զարդարուած է զանազան հեղինակութեանց պատկերներով, ինչպէս Վսեմ. Պօղոս Նուպար փաշա, Մինաս Չերազ, Մ. Փորթուգալեան, և այլն։ Կը պարունակէ գրական բանաստեղծութիւններ, կենսագրութիւններ. և յետոյ կոկիկ և կարևոր օրացոյց մը, ուր կը տեսնենք բացի մերինէն՝ ամէն ազգաց թէ՛ եկեղեցական և թէ՛ քաղաքական տօները։ Վերջապէս սա կը ջանայ Թէոդիկի «Ամէնուն Տարեցոյցը» գործին դերը կատարել արտասահմանի մէջ։ Գինն է 2 ֆրանք. իսկ չքեղ տպագրութիւնը 2 ֆր. 50. դիմել

Imprimerie Nercès

272, rue Saint-Jacques PARIS (5e)

ARMENIA PAST AND PRESENT. — Պր. Արշակ Սաֆրաստեան ղրկած է մեզի W. Llew. Williams ի հրատարակած այս գիրքը, որ 200է աւելի էջերով բաղկացած է։ T. P. O' Connor երեք էջով ընտիր յառաջաբան մը զետեղած է, ուր մեր ցեղին բարեմասնութիւնները կը գրուատէ, և կը պարզէ ներկայ հատորին նպատակը, այսինքն՝ ծանօթացնել քաղաքակիրթ ազգերուն՝ Հայուն բաղձանքները, ձգտումը և իբրև առանձին քաղաքակիրթ ազգ կառավարուելու տակ ըլլալը։

Վիլիամսի գրչին տակ՝ Հայաստանի գեղեցիկ և փառաւոր դրուագները կը ցուցադրուին. կը հիանայ մարդ երբ կը տեսնէ՝ թէ մեր ազգին ամբողջական վիճակն իբրև կիտուածանկարի մը մէջ ամփոփուած է՝ շա՜տ ճշգրտօրէն։ Ահա նիւթերու ցանկը.

ՄԱՍՆ Ա. — Երկիրն ու ժողովուրդը (էջ 3-38). — ա. Աշխարհագրական. – բ. Ազգագրական. — գ. Տնտեսական.

ՄԱՍՆ Բ. — Պատմական (41-43). — ա. Վաղեմի թագաւորութիւն մեծ Հայաստանի. — բ. Փոքրագոյն թագաւորութիւն. — գ. Թուրքի գարշապարին տակ. — դ. Հայկական եկեղեցւոյ պատմութիւնը։

ՄԱՍՆ Գ. — ա. Ներկայ հարցը (147). — բ. Հայկական իղձը (162). — գ. Ժամանակիս պատեհ առիթը (175)։

ՅԱՒԵԼՈՒԱԾ. — Հայերը և Հռովմէական վերջին կայսրութիւնը (191)։

Ամենէն վերջ դրուած է քարտէս մը՝ Մեծն Հայաստանի հին թագաւորութեան. և ուրիշ մը՝ Ինքնավար Հայաստանի առաջարկուած սահմաններով։

Լաթակազմ, 12 × 15 հարիւրամեդր ծաւալով, ընտիր թուղթի վրայ. տպուած է 1916ին ի London, գինն է 3 շիլ. և 6 բէնս. յանձնելի է գնել և տարածել անգլիախօս ազգաց մէջ, պէտք է դիմել

P. S. King and Son, Ltd.

Orchard House, Westminster

LONDON

ARMENIA. — Eco delle rivendicazioni armene. Rivista mensile illustrata.

Corso Reg. Margherita, 73

(Italia) TORINO

digitised by A.R.A.R.@